ՓԵՐԻՇԱՆ.– Լաա՜ա՜ւ… (Երկարացնում է մինչեւ ամրոցի խորքը գնալով։)

ԽՈՉԵՆԻ.– (Խորդում է եւ բեղերը ոլորելով մտիկ տալիս դեսուդեն։)

ԴԱՆԳԻՉ.– (Խորքից) Խոզենի՜…

ԽՈՉԵՆԻ.– Ինչ է՜է՜…

ԴԱՆԳԻՉ.– Սոված եմ,

ԽՈՉԵՆԻ.– Արի գոմե՛շ կեր,

ԴԱՆԳԻՉ.– (Դուրս ցատկելով ամրոցից՝ փաթաթւում է ամրոցի ատամներից մինին) Ո՞ւր է, բեր։

ԽՈՉԵՆԻ.– (Հսկայաբար եւ երկար ծիծաղում է) Հա՛, հա՛, հա , հա , փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ…

ԴԱՆԳԻՉ.– (Բռնելով նրան) Ծիծաղդ պրծի բան եմ ասում։ Ծիծաղդ պրծի բան եմ ասում։

ԽՈՉԵՆԻ.– (Շարունակում է ծիծաղել, կարծես այդ ծիծաղը անկախ բան է նրանից։)

ԴԱՆԳԻՉ.– Տե՛ս, պրծա՞ւ ծիծաղդ, տե՛ս, պրծա՞ւ ծիծաղդ։

ԽՈՉԵՆԻ.– (Հանկարծ դադարելով) Հա՛, պրծա՛ւ։ Ի՞նչ ես ասում։

ԴԱՆԳԻՉ.– Ղոռոբուղան էստեղ չի՞։

ԽՈՉԵՆԻ.– Ո՛րսի է գնացել, ո՛րսի…

ԴԱՆԳԻՉ.– (Կանգ առնելով եւ մտածելով) Ասում ես որսի՞։ (Էլի կանգ է առնում եւ մտածում։)

ԽՈՉԵՆԻ.– Տե՛ս, հասկացա՞ր։

ԴԱՆԳԻՉ.– (Կանգ առնելով եւ մտածելով) Հա՛, հասկացա։ (Ընկղմում է։ Սակայն իսկոյն դուրս գալով) Մեծ պղինձը ես պիտի ուտեմ։

ԽՈՉԵՆԻ.– (Ճղղում է) Բա՜ա՜ա՜, ո՞նց թէ։ (Բամփում է գլխին) Այ քեզ։ Հըա՜մմմ…

ՓԵՐԻՇԱՆ.– (Հանկարծ դուրս պրծնելով ամրոցի խորքից, օդը հոտոտելով) Մարդահոտ եմ առնում…

ԽՈՉԵՆԻ.– Մարդահո՞տ…Հըա՜մմմ,

ՓԵՐԻՇԱՆ.– (Կռանալով դէպի ներքեւ) Ղորոնթի…Մարդահոտ է գալիս…

ՂՈՐՈՆԹԻ.– (Շիլ հսկա, շեկ մաղերով։ Գլուխը դուրս հանելով) Մարդահոտ…(Հոտոտում է օդը։)

ԽՈՉԵՆԻ.– (Ցոյց տալով դէպի ձախ) Ղոռոբուղա ապերը, Ղառաղուռան։

ՓԵՐԻՇԱՆ.– Մեծ ապերն եկա՛ւ, մեծ ապերն եկա՛ւ։ (Ծափ է տալիս։)

Ձախ կողմից ներս են մտնում Ղոռոբուղան եւ Ղառաղուռան, առաջինը վիթխարի հսկա է թաւ հոնքերով, երկրորդը՝ աւելի փոքր, կարճահասակ